Նախանձ որոց՝ և իգլխոյ գլուգեւ շնորհակալութեան առ Մեծապատիւ Նուիրակս Մեծ. Պ. Ստեփաննոս Խաղնատարեանց և Հօգևոր և Համեստափայլ ամուսին նորա տիկին Հռիփսիմէ Յարութիւնեան Խալփեան, որոց և ես գոհաբան որդի և լիարկեան օրհնութեամբ մաղթեմ ի Տեառնէ և ի Փրկչէն մերմէ յԱստուծոյ կեանս երկարս և բարեբաստիկս ունել աստ յօգուտ և խրախճանութիւն Եկեղեցւոյս և ազգիս, և ի հանգերձելումն վայելել լուսոյն դրախտայինն այսօրեկ ամենից տարբերութեանց։

Հայրաբար և Աղօթարար

ՄԵԼՔՈՆ ՔԱՀ. Տ. ԲԱՂՏԱՍԱՐԵԱՆՑ.

Ի 29-ն Յունիսի 1875 ամի,
Ի Զանգիբասար Նորաշինէ։

Այս բարեպատեհ առթիւ Արարատայ խմբագրութիւն եւս գովելով յիշեալ բարեպաշտ նուիրատուաց բարի նպատակը եւ առաքինագործութիւնքը՝ հրապարակաւ շնորհակալութիւն կյայտնէ առ նոսա։

Շատանա՜ն եւ աճի՜ն միշտ այսպիսի առաքինի եւ բարեգործ Հայեր՝ որք անմահական կոթող եւ յիշատակներով մշտնջենական ժառանգներ եւ օրհնաբաններ կթողուն Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Ազգի մէջ։

## ԲԵՒԵՌԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ Ի ԳԱՆԼԻՃԱ ԳԵՂՋ ՇԻՐԱԿԱՑ.

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Ըստ որում խմբագրութեանդ բարենպատակ ափութութիւն է և յառաջնորդն՝ հրապարակելոյ ի մի ամսատետրն Արարատայ վերլուծել ուշադրութեան



1. 2. 3. 4. 5.

արժանի նորանոր նշանաւոր յօդուածներով ի բարոյական զարգացումն մտաց ընթերցողաց Արարատայ և զի՝ արդէն Տպարանն Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ունի պատրաստի բևեռաձև գըրոց ձուլածոյ տառերն, որովք քանիցս իմ աշխատութեամբ զանազան տեղերից գտած և արտագրած՝ նոյնպիսի գրովք արձանագրութիւնքը տպագրուած են, ուստի փութամ յանձնել խմբագրութեանդ՝ յօդուածոյս հետ միասին զօրինակըն հինգ տող բևեռաձև արձանագրութեան՝ գըրեալ ի վերայ քարաժայռին եղեալ բլրակի ամրացեալ աւերակաց՝ որ մերձ խրճիթին Ղանլիճայ գիւղ Շիրակայ և յանդիման Արարատայ կէնտի մէջ զետեղել ի հետաքրքրութիւն հնասիրաց և հնագիտաց.

Այս առթիւ յատուկ շնորհակալութիւն կը յայտնեմ Աղէքսանդրապօլցի Բարեկրօն Յովսէփ Աւագքահանայի Պոստանեանց և Պ. Աւետիքի Եղեկեանց, որք նորկայ արձանագրութիւնը ձեռք բերելոյ համար օժանդակեցին ինձ.

ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ

Յ 30 Յուլիսի 1875 ամ

Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ.

ՅԱԽԱԼՑԽԱՅԷ:

Ո՛չ և իցէ գործոյ գովեստ և կամ պարսաւ տալը ամենայն մարդոց գործն է, բայց թէ շատ քիչ կպատահի՝ որ ճշմարիտ բարին իւր բարի նպատակներով գովութեան արժանի լինի, և չարն էլ իւր չար պարագաներովն անարգանաց ենթարկուի. ուստի այս կէտիս իմ գովեստը հանդերձ շընորհակալութեամբ ոչ որին չէ վերաբերում, եթէ ոչ Աղէքսանդրապօլեցի Պ. Մարտիրոս Չիթողձեանցին.

Վասն զի յիշեալ Պարոնը երբ Ախալցխայ քաղաք եկաւ, և ի վաղուց հետէ Կարնոյ քաղաքին մէջ եղած ժամանակին անգամ լսելով Վարդանեան Ուսումնարանի բարի համբաւը և նորա աշակերտաց յառաջադէմ զարգացումները, ուզեց ի սոյն ամի անցեալ Յուլիսի 28 ին, անդրայս յիշեալ Ս. Վարդանեան դպրոցին այցելութեան եկաւ և աշակերտաց յառաջադէմ զարգացած և աշխոյժ պատասխանատուութեանց արդիւնքներէն գրաւուելով Պ. Չիթողձեանցն ինքնատ աղքատիկ մանկանց ընծայեց յիսուն րուբլի արծաթ, որ յիշեալ գումարով հոգաբարձութիւնը կարողանայ հոգս քաշելով բերել տալ աշակերտաց դասուց վերաբերեալ գրեանք.

Ահա այսպիսի բարեսրտութեամբ Պատուարժան Պարոնը ուրախացրեց անմեղիկ մանկանց սրտերը ցոյց տալով իւր բարեպաշտական ջերմ զգացողութիւնը.

Ուստի և մեք գոհ սրտով Վարդանեան դպրոցի աշակերտաց կողմանէ շնորհակալութիւններս կը յայտնեմք հրապարակաւ, ցանկալով իւր որդւոյն տեւողի ազնիւ սրտին.

ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՄԻՍԱՔԵԱՆՑ.

Ի 1-ն Օգոստոսի 1875 ամ

յԱխալցխա:

---

ՍՈՒՐՃԱՆԴԱԿՔ ԲԻՒԶԱՆԴԱՆ·

—ԲՈՂՈՔԱԿԱՆ ՔԱՐՈԶՉԱՑ ԽԱՐԴԱԽՈՒԹԵԱՆՑ ՄԻ ՊԱՏԿԵՐ ԵՒՍ·

Հետեւեալը Լոյս Հանդէսի Բ. շրջանի Ա. թուոյն մէջ հրատարակուած է, յորում բողոքական Հայոց եւ քարոզչացն մի հակասական եւ սխալ համոզման պարզ պատկերն եւս կտեսնուի. յորում կատարեալ խարդախութիւնն իւր խակական նշանակութեամբ դարձեալ կփայլի միսիոնարաց վերայ:

"Թուրքիոյ մէջ բողոքական Հայք իրենց բողոքականութեանը համար չեն մոռնար թէ Հայ են, ոչ ալ նուազ կը սիրեն իրենց Հայ ազգը, կամ նուազ կը պարծին իրենց ազգային պատմութեամբը. արդարև անոնք պիտի չբաժնուէին Հայաստանեայց Եկեղեցիէն, ոչ ալ դատ քաղա-